ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2024 թվականի N 0641-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավարի 2013 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 582-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Չարենցի փողոց թիվ 79 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող 4.0 (չորս) քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 5 (հինգ) տարի ժամկետով հատկացվել է Ա/Ձ Ռաֆիկ Մուքաելյանին, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և Ա/Ձ Ռաֆիկ Մուքաելյանի միջև 2014 թվականի մարտի 25-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ /սեղ. նո 1966/:

Այնուհետև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 639-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Չարենցի փողոց թիվ 79 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող 4.0 քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացվել է մինչև 25.03.2024 թվականը և տաղավարին ամրագրվել է նոր ճշտված հասցե՝ Չարենցի փողոց թիվ 79/1, համաձայն որի Արմավիրի համայնքապետարանի և Ա/Ձ Ռաֆիկ Մուքաելյանի միջև 2019 թվականի նոյեմբերի 27-ին կնքվել է հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր՝ /սեղ. նո 11469/:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

Ա/Ձ Ռաֆիկ Մուքաելյանի մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել է իր՝ կառուցապատողի պարտականությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի քաղաքային համայնքի և Ա/Ձ Ռաֆիկ Մուքաելյանի միջև 2014 թվականի մարտի 25-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի 9.1 կետն, ընդառաջելով Ա/Ձ Ռաֆիկ Մուքաելյանի 2024 թվականի մարտի 13-ի թիվ 1612 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի քաղաքային համայնքի և Ա/Ձ Ռաֆիկ Մուքաելյանի միջև 2014 թվականի մարտի 25-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում՝ /սեղ.նո 1966/ կատարել փոփոխություններ.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 25.03.2027 թվականը:

2) Պայմանագրի 1.1 կետում «5000 (հինգ հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «12000 (տասներկու հազար)» բառերը:

3) Պայմանագրի 5.1 կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմում է «20000 (քսան հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «48000 (քառասունութ հազար)» բառերը:

2. Իրավաբանական բաժնին՝ Ա/Ձ Ռաֆիկ Մուքաելյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2014 թվականի մարտի 25-ին՝ /սեղ. նո 1966/ կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Գ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024թ. մայիսի 14
ք. Արմավիր